Փոխանակման ծրագիր

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և

Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարարության միջև կրթության, գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին

2015-2020թթ. համար

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարարությունը՝ ի դեմս Հորդանանի կառավարության (այսուհետ՝ «Կողմեր») ըստ 2013 թվականի հունիսի 24-ին Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Ամմանում ստորագրված Կրթական և Գիտական համագործակցության մասին Համաձայնագրի, ձգտելով զարգացնել երկկողմանի համագործակցությունը և ամրապնդել երկու երկրների միջև բարեկամական կապերը՝ համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կզարգացնեն և կամրապնդեն կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում երկու երկրների միջև համագործակցությունը հավասարության և փոխշահավետության սկզբունքների վրա՝ համաձայն երկու երկրներում գործող օրենսդրության:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն երկու երկրների համալսարանների և գիտական ու հետազոտական կազմակերպությունների միջև անմիջական կապերի հաստատմանն ու զարգացմանը՝ համաձայն կողմերի միջև ստորագրված երկկողմանի համաձայնագրերի:

Հոդված 3

Կողմերը տարեկան մինչև 25 կրթաթոշակ կտրամադրեն տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարապետաշինարարության, հնագիտության, լեզվաբանության, բժշկության (ներառյալ մագիստրատուրան) ոլորտներում՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ամբողջ կիսամյակի և մեկ տարի արաբերենի ու իսլամագիտության և համապատասխան վերապատրաստման դասընթացների համար, որոնց, անհրաժեշտության դեպքում, կնախորդեն լեզվի դասընթացները:

Հոդված 4

Ընդունող Կողմը, համաձայն Հոդված 3-ի, կրթաթոշակ ստացած անձանց կապահովի հետևյալով՝

- ուսման վարձից ազատում,
- ամսական հատկացում՝ համաձայն ընդունող երկրի գործող օրենսդրության,
- ուսանողական հանրակացարանում կացություն՝ համաձայն ընդունող երկրի գործող օրենսդրության,
- մուտք գրադարաններ, արխիվներ, լաբորատորիաներ, և այլն:

Դեպի Ընդունող Կողմի մայրաքաղաք և մայրաքաղաքից հետադարձ ճանապարհորդական ծախսերը կհոգա թեկնածուն:

Հոդված 5

Փոխադարձ կապերը ամրապնդելու, փորձի փոխանակման, ինչպես նաև համագործակցությունը զարգացնելու նպատակով՝ Կողմերը կկազմակերպեն փորձագետների խմբի տարեկան փոխանակում:

Հոդված 6

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին կտրամադրի վավերացված փաստաթղթեր և առաջադրված թեկնածուների անվանացանկ՝ յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից ոչ ուշ:

Հոդված 7

Սույն Ծրագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման պահից և ուժի մեջ կլինի հինգ տարի ժամկետով:

Ստորագրվեց Երևանում, հունիսի 30-ին 2015, երկու բնօրինակներով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Փոխանակման Ծրագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Հայաստանի Հանրապետության

կրթության և գիտության

նախարարության

կողմից

Հորդանանի Հաշիմյան
Թագավորության բարձրագույն
կրթության և գիտական
հետազոտությունների
նախարարության

կողմից

EXCHANGE PROGRAM

BETWEEN THE MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE MINISTRY OF HIGHER EDUCATION AND SCIENTIFIC RESEARCH OF THE HASHEMITE KINGDOM OF JORDAN IN THE FIELD OF EDUCATION, SCIENCE AND TECHNOLOGY

FOR THE YEARS 2015-2020

The Ministry of Education and Science of the Republic of Armenia on behalf of The Government of The Republic of Armenia and The Ministry of Higher Education and Scientific Research of the Hashemite Kingdom of Jordan on behalf of Government of Jordan, hereinafter referred to as "the Parties" referring to the Agreement on Educational and Scientific cooperation between the Government of The Hashemite Kingdom of Jordan and the Government of The Republic of Armenia signed in Amman on 24th June 2013.

Driven by the desire to develop bilateral cooperation and strengthening the ties of friendship between the two countries,

Have agreed on the following:

Article 1

The Parties shall develop and strengthen cooperation in the field of education, science and technology between two countries on the basis of equality and mutual benefit according to the national legislations of their countries.

Article 2

The Parties shall support the establishment and development of direct links between the universities and scientific and research organizations of both States in accordance with bilateral agreements signed between these organizations.

Article 3

The Parties shall grant annually up to 25 scholarships for full term of Bachelor and Master Degree in the field of Information Technologies, Architecture and Construction, Antiquities, Linguistics, Medicine (Integrated Master's Degree) and for one-year Arabic language and Islamic studies and training on reciprocal basis proceeded by language course, in case of need.

Article 4

The receiving Party shall provide to the persons who have received scholarships on the ground of article 3 the following:

- exemption of tuition fee;
- monthly allowance in accordance with the national legislation of the Receiving Party;
- accommodation in student hostel in accordance with the national legislation of the Receiving Party:
- access to the libraries, archives, laboratories, etc.

The travel expenses to and from the capital city of the Receiving Party shall be covered by the candidate.

Article 5

With the aim of strengthening the mutual relations, sharing the experience as well as developing the cooperation the Parties shall organize annual exchange of expert group.

Article 6

Each Party shall provide the Other Party with authenticated documents and lists of nominees no later than 15th of August each year.

Article 7

The present Program shall enter into force on the date of its signature and shall remain valid for five years.

Done in Yerevan, on 30th of June, 2015, in two original copies, each in Armenian, Arabic and English languages, all texts being equally authentic. In cases of divergences in the interpretation of the provisions of this Exchange Program, the English text shall prevail.

For

the Ministry of Education and Science

of the Republic of Armenia

For

the Ministry of Higher Education

and Scientific Research

of the Hashemite Kingdom of Jordan